ՆՈՐԱՀԱՅՏ ՎԱՎԵՐԱԳՐԵՐ ԳԵՆԵՐԱԼ Վ. ՄԱԴԱԹՈՎԻ ՄԱՍԻՆ

Հանրահայտ են ռուսական բանակի բարձրաստիճան զինվորական հայորդի Հովհաննես-Ռոստոմ-Վալերիան Մադաթովի (Մադաթյան) քաջագործությունները։ Նա ունեցել է ռազմական սխրանքներով հարուստ կյանք և գործել է տարբեր ռազմաճակատներում։

Մադաթովի կենսագիրներ ու գործակիցներ Ա. Խոմյակովը, Ի. Բակունինը, Մ. Կոցեբուն, Վան Հալեն և ուրիշներ իրենց գրառումներով ու հուշերով մի անգամ ևս հավաստում են գեներալ Մադաթովի կյանքի ու գործի անմոռաց դրվագները, նրան բնութագրում իբրև բացառիկ զորավարի, հայրենասեր մարդու և առաքինի քաղաքացու։ Այս հատկանիշները նա բազմիցս դրսևորել է 1806—1812 թթ. ռուս-թուրքական պատերազմում, 1812 թ. հայրենական պատերազմում, 1818—1820 թթ. լեռնականների հետադիմական ուժերի և ռուսական զորքերի միջև տեղի ունեցած կռիվներում, 1826—1828 թթ. ռուս-պարսկական և, ի վերջո, 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմներում։

1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ Մադաթովն իր երկուհազարանոց փոքրաթիվ զորքով Շամքորի մոտ չարաչար պարտության մատնեց պարսկական տասհազարանոց բանակին (1826 թ. սեպտեմբերի 3)։ Ապա նա մասնակցեց նաև Գանձակի ճակատամարտին (1826 թ. սեպտեմբերի 13) և Ղարաբաղը լրիվ մաքրեց պարսկական զավթիչներից։ Ցուցաբերած քաջագործությունների համար Մադաթովին 1826 թ. սեպտեմբերի 28-ին շնորհվեց գեներալ-լեյտենանտի կոչում։ Նա փայլուն մասնակցություն ունեցավ նաև ռուս-թուրքական 1828—1829 թթ. պատերազմին՝ կռվելով Դանուբյան բանակում։ Շումլայի մոտ նրա տարած հաղթանակի շնորհիվ է, որ ազատագրվեցին Խակչայ և Գիրսով ամրոցները։ Նա պարգևատրվեց Ալեքսանդր Նևսկու շքանշանով։ Այս օրերին էլ նա զոհ դարձավ ազատալի հիվանդության՝ հազիվ 47 տարին բոլորած. Բուլգարիայի Շումլա քաղաքում 1829 թ. նոյեմբերի 4-ին նա կնքեց իր մահկանացուն։ Նրա աճյունը տեղափոխվեց Պետերբուրգ և թաղվեց Ալեքսանդր Նևսկու վանքում։

Մադաթովը հայ ժողովրդի փրկությունը կապում էր ռուսական զորքերի հաղթանակների հետ և այդ նպատակին նվիրաբերեց իր բովանդակ գիտակցական կյանքը։

Ընթերցողների ուշադրությանն ենք հանձնում վերջերս մեզ հայտնի դարձած ականջալուր և ականատես հեղինակի գրչին պատկանող «Ցաղգաց վիպասանութեան յայտարարութիւն գործեալ իրաց հայկազն Մադաթեան Յոհաննէս սպասալարի ռուսաց» վերտառությամբ վավերագիրը։ Այն մի հատված է մաշտոցյան Մատենադարանի ձեռագրատան 2734 թվահամարի տակ պահվող Հակոբ Զաքարյան Շուշեցու «Պատմութիւն Արցախու» վերտառությամբ աշխատությունից, ուր հեղինակը նկարագրում է XVIII դ. կեսերին և XIX դ. առաջին քառորդին Արևելյան Հայաստանում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները, Աղա Մուհամմադ խանի 1795—1797 թթ. Անդրկովկաս կատարած արշավանքները, գերեվարությունները ու ավերածությունները, Թիֆլիս քաղաքը հիմնահատակ անելու, ինչպես նաև 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմների պատմությունը և այդ պատերազմում Մադաթովի քաջագործությունները, կարևոր տեղեկություններ է հաղորդում մասնավորապես Շամքորի, Գանձակի ևնտ գրավման համար մղված ճակատամարտերի և Շուշի բերդամրոցը Արաս Միրզայի մեծաքանակ զորամասերի պաշարումից ազատելու մասին։

Հիշյալ ձեռագրի լիակատար վերնագիրն է՝ «Պատմութիւն գաւառին Արցախու գրեալ ի Յակոբ սարկաւագէ Պողոսեան Զաքարեանց Շուշեցւոյ, միաբան Սբ. Երուսաղէմի, յամին 1853 ի սուրբ Երուսաղէմ»։ Երուսաղեմի հայ միաբաններին և այցելուներին նվիրած մենագրությունում Մկրտիչ արքեպիսկոպոս Աղավնունին վերոհիշյալ երկի հեղինակի մասին գրել է հետևյալը. «Յակոբ սարկաւագ Պողոսեան Զաքարեանց Շուշեցի, միաբան 1860-ին ս. Յակոբի

վանքին, կընդօրինակէ «Անտառ այլաբանութեան» գիրքը»[1]։ Բերված տողերից պարզվում է, որ Աղավնունուն անհայտ է Արցախի մասին Զաքարյանցի գրած երկը։ «Անտառ այլաբանության» ձեռագիրը այժմ պահվում է Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց մատենադարանի ձեռագրատան 2680 թվահամարի ներքո և ընդարձակորեն նկարագրվել է բազմավաստակ ձեռագրագետ Նորայր արքեպիսկոպոս Պողարյանի կողմից՝ նրա կազմած Երուսաղեմի ձեռագրացուցակի 8-րդ հատորում։ Այստեղից էլ մեզ հայտնի է դառնում, որ վերոհիշյալ Հակոբ սարկավագը 1860—1861 թթ. Երուսաղեմում ընդօրինակել է Ժ+1006 էջերից բաղկացած և մաքուր շղագրով գրված «Անտառ այլաբանութեան սուրբ գրոց» խորագիրը կրող ձեռագիրը, որի ստացողն է եղել Փիլիպոս վարդապետ Խաչատուրյան Նաճառյանց Բաքվեցին։ Ձեռագրի գրչի հիշատակարանն ուշագրավ է Երուսաղեմի հայոց պատրիարքության անապահով կյանքի նկարագրությամբ[2]։

Ինչ վերաբերում է Հակոբ սարկավագի կյանքին, նշենք, որ Աղավնունուն անծանոթ է մնացել այն իրողությունը, որ նա շուտով վարդապետ է ձեռնադրվել՝ վերանվանվելով Ղևոնդ։ Այդ մասին «Արցախի պատմության» մատյանում կա մի ծանոթագրություն, ըստ որի «Այս սարկավագը 1862 ամին սկիզբը վարդապետ ձեռնադրվեցավ և անունը Ղևոնդ դրվեցավ Սսեցի Մեսրովպ եպիսկոպոսի ձեռքով, որ երկու տարիի չափ հյուր կեցած էր ս. Հակոբի վանքը»[3]։ Հիշյալ փաստը մի անգամ ևս հաստատվում է Երուսաղեմի № 2697 Բ գրչագրով, գրված 1862 թ., ուր նշված է, թե «Սարկաւագ Յակոբն՝ Ղևոնդ կոչեցաւ», այսինքն Հակոբ սարկավագը վարդապետ է ձեռնադրվել և վերանվանվել է Ղևոնդ, որը և ապացուցում է քիչ առաջ մեր նշած փաստի հավաստիությունը[4]։

Անդրադառնալով ստորև հրատարակվող անտիպ վավերագրին, նշենք, որ նրանում հատուկ շեշտով արձանագրված և ընդգծված է Անդրկովկասի ժողովուրդների ռուսական որոշակի կողմնորոշումը, նրանց մղած երկարատև ու համառ պայքարը պարսկա-թուրքական բռնակալությունից ազատագրվելու և ռուսական հովանավորության տակ անցնելու համար։

Մինչև այժմ հայտնի է եղել, որ Մադաթովի անունը ոչ միայն Վալերիան է եղել ռուսական միջավայրում, այլև նա ունեցել է Ռոստոմ հայկական անունը։ Խնդրո առարկա ձեռագրից հայտնի է դառնում, որ նա կոչվել է նաև Հովհաննես, մի իրողություն, որն անհայտ է եղել նրա կենսագիրներին։

Հեղինակը գեղեցիկ ու պատկերավոր ոճով է նկարագրել Շամքորի պատմական ճակատամարտը, անդրադարձել ռուս և հայ ռազմական համագործակցությանը։ Ուշագրավ են նաև այն հատվածները, որոնցում նկարագրված են Մադաթովի ծննդավայրի, նրա ունեցվածքի, պարսիկների կողմից նրա հոր ու հարազատների գերեզմանների ավերման, նրանց ոսկորների այրման մանրամասները։

ՌՈՒԶԱՆ ՏԻՏԱՆՅԱՆ

ՅԱՂԱԳՍ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԵԱԼ ԻՐԱՑ ՀԱՅԿԱԶՆ ՄԱԴԱԹԵԱՆ ՅՕՀԱՆՆԷՍ ՊՊԱՍԱԼԱՐԻ ՌՈՒՍԱՑ[1]

Եւ յետ ոչ սակաւ արիութեամբ տիրելոյ քաջամարտիկ զօրացն ռուսաց անուանեալ քաղաքին Գանձակու, և բուռն զօրութեամբ վանելոյ ի սահմա-

---

1 Մ կ ր տ ի չ եպիսկ. Ա ղ ա վ ն ո ւ ն ի, Միաբանք և այցելուք հայ Երուսաղեմի, Երուսաղեմ, 1929, էջ 326։

2 «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատոր ութերորդ, կազմեց Ն ո ր ա յ ր արքեպիս. Պ ո ղ ա ր յ ա ն, Երուսաղեմ, 1977, էջ 298—299։ Հիշյալ երկը 1733 թ. թարգմանվել է Կ. Պոլսի պատրիարքի և Երուսաղեմի այցելու Հովհան Բաղիշեցու կողմից՝ Կ. Պոլսում, իսկ համառոտողն է եղել Երուսաղեմի միաբան Պողոս Ադրիանուպոլսեցի եպիսկոպոսը։ Վերջինից կատարված ընդօրինակությունն ավարտվել է 1861 թ. հուլիսի 25-ին, Երուսաղեմում։ Այդ գրչագիրը հետագայում հասել է Դամասկոս և պատկանել է ս. Սարգիս վանքի տեսուչ Բառնաբաս վարդապետ Տեր-Հովսեփյանին, որն էլ այն նվիրել է Երուսաղեմի միաբան Մեսրոպ վարդապետ Վանեցուն։

3 Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2734, էջ 14ա։

4 «Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց», հատոր ութերորդ, էջ 317։

1 Մատենադարան, ձեռ. № 2734 թ. 15ա—20ա։

նաց գաւառին զանմարդաբար զօրս չարաճճի պարսիցն, ապա ազգումն անհնարին լինէր յայնժամ ի սիրտ տիրանէնդ շահին։ Քանզի առ որ՝ մինչ ցայն ի համարի դիւրաբեկ եղեկան էին հետևողքն Քրիստոսի և տիրօղք նոցին թագաւորք քրիստոնէից, այժմ զանհնարին աղէտս վտանկի կրեալ ի նոցանէ, իբրև զարշ վիրաւոր մրմռայր ի ցաւոց տակնապեալ սրտին։ Զի՞նչ ապա այնուհետև առնել հարկեցաւ, ճոլիրս սևագունդ զօրաց՝ կազմեալ պատրաստէր անթիւ բազմութեամբ՝ իբրև զքարանց կարկառս հեղեղատի, մինչ զի՝ ինքն իսկ շահն սքանչացեալ ընդ անթիւ բազմութիւն այրուձի և հետևակ զօրացն իւրոց, ոչինչ այնուհետև զանգիտէր՝ անձամբ իսկ ընդ նոսին, ոչ իբր ի մարտ պատերազմի դիմել, այլ ի զբօսանս ընթանալ և օդափոխիկ լինիլ ի բարեբեր կողմանս վերին Հայոց։

Վասն զի գոլով սա հետևօղ անաստուած բարուց հայրենի անհնարինս չարիս խորհէր քրիստոնեայ բնակչաց այնր կողման. և ի մտի եդեալ՝ ի կարճամտութիւն իւր դատէր այսպէս։ Հաղթեցից սակաւութիւնքն բազմացս զթշնամին, և զայլսն՝ ասպատակ ընդ երեսս երկրին սփռեալ աւար հարից զքրիստոնեայս տեղոյն միահամուռ՝ մինչև ի ձուն[2] հաւուն։ Եւ յայս միտ դիւակրկիռ առեալ զերկրածուփ և զմարդախոշոշ բազմութեան գազանաբարոյ զօրացն՝ չուէր խաղայր հապճեպով[3] ընդ գետն մեծ Երասխ անցեալ հասանէր ի գաւառն Արցախու։ Եւ ի լայնանիստ դաշտի միում բանակեստեղ սահմանեալ հանգիստ իւրոյ զօրուն առնէր։ Իսկ ապա ի սաստիկ շնչմանէ ստորանկեալ ամբարտաւանին, ևս քան զևս լնոյր և սա ամբարհաւաճութեամբ։ Կոչէր առ ինքն զմի անտի յիւրոցն, առաքէր նովաւ պարկ մի կորեկ առ հայազգի զօրապետն ռուսաց Մադաթով[4] պակուցանել կամելով աշխարհակոյտ բազմութեամբն կնամարդի զօրացն իւրոց՝ զանխուճապ սիրտ քրիստոսազօր իշխանին։ Եւ նա զինչ առ այս պատասխանի հղէր հաւ մի ասելով, որպէս կերակուր լինի կորեկս հաւուդ, այնպէս բազմութիւնդ ամենայն բաժինք սրոյ լինին սակաւաթիւ զօրացս խաչազօր։ Իրօք պատարեցաւ աստուածս առնս ի հանդիպիլ իրերաց քաջութեամբ։

ՅԱՂԱԳՍ ԲԱՅԱՅԱՅՏՈՒԹԵԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՅՕԴՈՒԱԾ Ա

Այլ մեք թողեալ աստ առ սակաւ մի զիրս պատերազմին, որ ինչ բան է ի վերայ դէնպետին պարսից շէյխիսլամ անուանելոյ զայն՝ նախ ասասցուք, զի պատմութիւնս կարգաւ ընթացեալ և իւրաքանչիւր պարագայից իրողութիւն զհամապատշաճ դասակարգութիւն շարից ընկալեալ առաւելագոյն իմն շուարճութեան լինիցին առիթ մտաց զսոյն ընթերցողաց։ Քանզի յերկրորդում գիշերի անդ յորում դադարիւր սևագունդ բանակ խառնիճաղանճ[5] զօրացն պարսից, ստանայր ի նմին շահն զհղեալ կորեկին վաւերական պատասխանին վայելուչ փոխաբերութեամբ, յորմէ կարի յոյժ ապա ի խոր խոցեցաւ հնացեալ տիկն փքացեալ ամբարտաւանութեամբ մանաւանդ զի հաւաստեաւ գիտէ զերեակ քաջութիւն առն Մադաթովի։ Մատչէր ապա համարձակ առ շահն դենպետս այս՝ ըստ ձախողակի դենին իւրեանց գոլով առաջնորդ՝ սպեղանիս յիմարական՝ առաւել ասեմ քան դիւթական մատուցաներ վարանեալ խորհրդոց մտայոյզ սրտին՝ պաճուճեալ լեզուաւն կեղծաւորութեամբ. «Մի՛ և մի՛ իւիք ասէ՝ յերկիւղ տարակուսանաց կթեալ տարուբերիցի արիական սիրտ տեառն իմոյ արքայի։ Ընդ հողմաշունչ բանս անարի հայ ազգոյն ընդ է՞ր այդքան և այդպիսի շփոթին միտք քո տիեզերավար։ Մի թէ չունիմք

---

2 Բնագրում՝ Ծուն։

3 Բնագրում՝ հապշեպով։

4 Բնագրում՝ ամեն տեղ՝ Մատաթով։

5 Բնագրում՝ խառնիջաղանճ։

մեք դենս զօրացուցիչ զմեզ՝ և մարգարէս հենարան մեզ, որոց միջնորդ ելեալ բարձրացեալ հասեալ կաս եղջիւրդ զօրութեան մերոյ՝ յայսպիսի գահագլուխ իշխանութիւն։

Ոչ ապաքէն զնոյն ընթեռնումք անցեալ զառանցեալ ժամանակաց գիրս պատմութեան, թէ որպէս նախնի գլուխքն մեր և թագաւորք զերկիրս առ հասարակ դղրդեցին և զաշխարհս ի հիմանց սասանեցին զինու զօրութեամբն իւրեանց. թագաւորութիւն հզօրս կործանեցին զքաղաքս ամուրս և թագաւորանիստս հիմն ի վեր տապալեցին , զինչ, ապա և վասն խաշապաշտիցն[6] ասացիս, զորս առ ոտ հարեալ իբրև զհաւուց ձագս ճմլեցին և այսօր ոմն ի զերծելոց ի մէնջ հայոց զթագաւորութիւնն առեալ զռուսաց սպարապետութիւն յանգիման գայ քեզ ոչ բազմօք խօզակեր արամբք լեռնականօք և արքայդ քաջ յանարեանց անտի՝ կասկածաւոր, իբրև թէ առիւծ յածեմանց այնպէս երկնչիս։ Մանաւանդ առաջի ձեր ունելով զիւղապարար մսաղարման և զբանրակեր սպառազէն աշխարհագոյտ զօրացն բազմութիւն։ Մի՛ այդպէս տէ՛ր իմ արքայ, յուսացիր ի գլուխն մեր Ալի և Մահումէդ, որով ունիմք պարծանս, և ի ծառայս նոցա անարժանիս հաւատա՛, զի առ վաղիւն յելանելն մեր ընդդէմ թշնամեացն ի պատերազմ արարից թելսիմ (այսինքն հմայս), զի ամենայն թնդանօթաձիկ ռումբք նոցա յետս ն[ա]հանջեալ[8] իւրովի դառնան և զնոսա սատակեալ սպանցեն և զոսկերս ձգողաց զօրացն ցրուեսցեն։ Իսկ անմիտ ունկնդիրն անե[ր]կրայ հաւատացեալ յիմարին պատրօղական բանից, ոչ սակաւ հողմս ուսուցից. ծծէր յանհիմն բանից շողոմարար դենպետին։

ՅԱՂԱԳՍ ՀԱՒԱՆԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԵԱՆ
ՅՕԴՈՒԱԾ Բ.

Քանզի ի ժամուն ի նմին ամենևին ի բաց եդեալ և լքեալ թողացուցանէր ի մտաց իւրոց զկարևոր խոկմունս պէս պէս հանգամանացն պատերազմին՝ որ եկեալ հասեալ և պատեալ պաշարել ունէին առ սակաւ մի զիւր և կոչէր զպարս կոտոցահար աղերախացն և զդասս փողահարացն շամբշելոց զվրանաւն բոլորեալ կացուցանէր՝ և ոչ դադարել ի հարկանելոյ մինչ ի ծագել արևուն հրամայէր։ Եւ այսպէս զսնոտի յոյս իւր պնդեալ ի չնչինս հաստատէր ի վերայ աւազափուլ հիման մահմետական կարծե(ա)լ կրօնին, խրախուութեամբ բազմաւ ի գլուխ հանէր զնսեմաստուեր գիշերոյին տխրականութիւն։ Եւ մինչև արեգակն լուսատու՝ յարևմուտս արձակեաւ յարևելից զոսկեճաճանչ շող ճառագայթաւէտ լուսոյն ընդ երկնաւ զերկիր լուսաւորէր, հասանէր բանս մոգպետին քաջալուր յականջս մեծայաղթ սպարապետին Մադաթովի. բայց նա ի դէմս ոչ տխրեցաւ ի վերայ թանձրացեալ նոցին յիմարութեան, սակայն ի հոգի ևս զուարճանայր, վասն զի ի քաջաց շառաւիղեալ ծանիր դու զսա այր ամենարուեստ, և զօրագլուխ զօրաց գոլ լիահանճար, որ գիտաց լար գործել զաղփաղփուն բանս մոգպետին և յորոգայթս մահու ըմբռնել զապստամբ որդիսն սասանայ պարսկի։ Զի՞նչ գործէր այրն ի գիշերին՝ յորում զլուրն առնէր, և զորայն պատմեցից սակաւուք անհապաղաբար զխելամտութիւն, զի մի՛ յարևուն ծագել ամբոխն զմիմեամբք բաղխեալ շփոթումն բանիցս գործեսցեն։

Եւ վասն զի սա զիւրսն ընդ թշնամեացն կշռադատեալ՝ սակաւորս գտանէր այնչափ, որքան նուազ գտանի մին առ քսան և հնգից թուոց, ապա պատ անձին վարկանէր ոչ այնքան ի զօրութիւն զօրուն, քան որքան յաստուած և յաստուածատուր յիւրն խոհական հնարագիտութիւն յարիլ մտօք։ Առեալ այնու-

6 Բնագրում՝ խաշախաշտիցն։

7 Բնագրում՝ անդի։

8 Բնագրում՝ նհանճեալ։

հետև հապար այրս գորովիս ի չորից հազարաց բովանդակ յիւրոցն զօրաց՝ վաղվաղակի առաքէր ի խաւար գիշերոյ ի շամբս ջրարբի եղեկանց՝ որ մերձ առ խրամօք Շամքուր գետոյն, հատանել անտի և երակ բերեալ հասուցանել զոչ կրճատեալ ի հապաւեալ խրձունս անթիւ եղեգանաց, զորս բերեալ գիշերայն ի դաշտին ի միջի ցցեալ տնկէին և երկարաձիգ հատուածով հատեալ կտրէին ի դիմաց ի կուսէ, յորմէ թշնամին խաղալ ունէր ի վերայ իւրեանց։ Եւ այսպէս ի հեռուստ տեսանողաց դաշտ եղեկնաբոյս և շամբ անմարդաբնակ զդարանակալ բանակետեղն իւրեանց ձևացուցանէին։ Իսկ ի փախնուլ գիշերային խաւարի զվրանս ամփոփել հրամայէր Մադաթովն իւրոյ զօրուն և զամենայն բարձրութիւն քան զհասակ եղեգանց խոնարհեցուցանել, և զնշմարանս սպիտակութեան ի թուխ սևութեան համակել։ Այսու հնարիւք անհետ տայր առնել զկարծիս թշնամեացն և թագուստ իւրոյ զօրուն, որք հուպ եկեալ և զողեալ ծածկէին մերձ ի շարշ եղեդանց։ Իսկ զորս հարիւր այր ի նոցանէ զատեալ արտաքս քան զեղեկն և ի վեր քան զբանակն հանեալ պատրաստէր քանի մի թնդանօթով և անդ ի պատրաստութիւն հսկել հրամայէր։

ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱՌՕՏՈՒԹԵԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹԵԱՆ ՅՕԴՈՒԱԾ Գ

Իսկ շահն ընդ լուսանալ աւուրն երրորդի հրաման պատուիրանի տայր ամենայն խոհարարաց զօրուն զենուլ զզենլիս և եփեալ պատրաստել փիլովն զպարսկօրէն բրնձեայ, մինչև ի միջոցս չորից ժամուց կամ հնգից ձերբակալ[եալ] զթշնամին զպարսկօրէն արարեալ՝ և դաւարն խնդութեամբ դարձուցեալ, խրախճանութիւնս բերկրականս հարդարեսցէ ըստ արժանի պատերազմողացն քաջութեան։ Իսկ ապա գրոհ անբարեկրօն բազմութեան տուեալ՝ հասեալ մտանէր ի դաշտն լայնատարած, որոյ կողմն յարևմտեան նորատունկ եղեկանցն շարք ինքնաբոյս շամբ ամենեցուն երևէր։ Եւ ահա անդուստ քաջափայլն Մադաթով դէտակն ի դէմս ամբարձեալ տեսանէր ի հեռուստ զառաջիկայ կանաչագէղ և ծաղկազուարճ[9] դաշտն սկսացեալ առաւել քան զհերկս գարնանային. և տակաւ տակաւ լնոյր ամենայն դաշտն մարդկութեամբ. բերանալիր ձայնիւն տարագնաց՝ գոչէր յամենայն զօրութենէ. «քաջալերացարո՛ւք, պի՛նտ կացէք, խաչազօր որդիք քաջութեան, տէր արդար է և ոչ մատնէ երբէք զյուսացեալ ծառայս իւր ի ձեռս անօրէն ապստամբաց». զայս ասելով խաղացուցանէր այնուհետև զչորս հարիւրսն հանդերձ իւրեանց պատրաստութեամբ ընդ մէջ ի դէմս իւրոյ դարանակալ բանակին, և յանդիման յարևմտից եկեալ թշնամեացն։

Իսկ շահն ի խրոխտաբար սօնքանալն իւրում առաջի զօրաց՝ զձայնն միայն լուեալ զօրագլխոյն ածէր զաչս իւր զկողմամբ լայնածաւալ դաշտին իբր զվարազ և գոչմանէ առիւծու շրտուցեալ. տեսանէր փոքր մի խումբ սպիտակազգեստ զօրաց ի դող անկեալ՝ շար ի շար խլրտում շարժմանց գործեն՝ հարուստ մի ի բացեայ ի շամբէն։ Զի՞նչ են այսոքիկ, հարցանէր յիւրոցն։ Եւ իբրև գիտաց թէ Մադաթովն է հանդերձ իւրովքն, քաջաժպիտ լեալ խնծղայր. հա՜հ, հա՜հ, առնելով ընդ նուազութիւն զօրուն հիացեալ[10]։ Սուրհանդակս առաքէր վաղվաղակի, «ասացէ՛ք անմիտ հայազգոյն այնմիկ, առանց սուր ի վեր ամբառնալ՝ լիցի ինձ անձնատուր յիմարն, և պատիւս մեծարանաց վայելեսցէ յինէն ի կեանս իւրում զի ես խնայեմ ի քաջանուն անձն իւր որ սակաւուք ի դէմս իմ եկեալ և իբրև զքարի հարեալ այնպէս սատակեսցի ի մէնջ անխնայ իւրօքն հանդերձ։ Ապա թէ ոչ, կենդանի եմ ես և կենդանի է անձն իմ ոչ զտցէ փախուստ յերեսաց իմոց և սուր կերեցէ մարմին նորա»։ Իսկ անուանին ի քաջս զի՞նչ առ այս. «Երթայք պատմեցէք շահին այսպէս, վատութիւն ընդ

9 Բնագրում՝ ծաղկազուարջ։

10 Բնագրում՝ յիացեալ։

քաջութեան խառնել շղու ամբարոյ ազգացն է անօրինաց. բայց ինձ շահատակիլն ի հանդէս պատերազմի և մեռանիլն արութեամբ պարծանք է մեծապէս, քան զոր շահն շաղակրատէ ստախօս. այսուամենայնիւ յուսացեալ եմ ի տէր, որ ապրեցոյց և ապրեցուցանէ զիս ի սրոյ չարէ և ես ոչ արարից ըստ կամաց ըստ շահին յաւիտեան»։

Իսկ յորժամ յետս դարձեալ սուրհանդակքն բերէին զհամարձակախօս լուր բանիցն զօրապետին, զայրանայր յոյժ և ի սրտմտութիւն բարկութեան բրդեալ դիւախրոխտ մոլորութեամբ խիզախումն առնէր խուժան բազմութեանն, որք զճիչ և զաղաղակ ամբարձեալ՝ ըստ անբարի բարուցն իւրեանց բքոյ օրինակաւ շփոթէին, և մառախլապատ ստուերաւ դաչս սրտից իւրեանց խցեալ՝ առ հասարակ դիմէին ի վերայ ռուսաց՝ իբրև գայլք ի գառինս յարձակեալք։ Այլ դու մտադրութեամբ տես զարիական մրցումն քրիստոսազօր իշխանին ընդդէմ գիշատեալ այլազգացն։ Կատարէր կամաւ. և զայն յօգուտ անձին զմարգարէութիւն մոլլային. զերեսս դաշտին ստուերած ծխովն թնդանօթի՝ իբրև շամանդաղաւ գիշերոյ մտղացուցանէր, սակայն ի թնդանօթացն ոչ ռումբք երկաթեալք, այլ կապերտք ցնցոտիք լոկ արձակէին։ Եւ յայնմանէ տայր պարսից՝ ես քան զիս ի կարծիս իւրեանց հաստատել, թէ յաջողեցաւ բան մոգպետին, զոր տեսեալ շահին՝ յառաջ մղէր՝ տագնապաւ[11] մեծաւ խաղացուցանէր զզօրս իբր սմբակակոխ[12] իմն և կամ ոտնահար զնոսա առնել։ Իսկ կորովին հայազգի՝ որ յետ կոյս չորեք հարիւրոցն կայր՝ պնդակազմ զնոսա առնէր ահարկու ձայնին և սրտաշարժ բանիւն։ Եւ մինչ թշնամին ի մեծի արշաւանս կրթէր ի վերայ սոցա, սա զիւրսն յետս յետս վարէր՝ զի թշնամին մերձեսցի ի դէմս դարանակալ պատրաստութեանն։ Եւ միտ սորայ այս էին՝ զի զիւրսն ի ներքս ընկալեալ՝ թշնամեացն միայն դէ[ն] եղեալ թնդակոծեսցէ, սակայն, ոչ ըստ կամաց յաջողեցաւ վասն զի ընդ կրունկն դառնալ ի թիկանց երկեան և սակաւորքն ի յետս յետս ընթանալն կարի համեցան, մինչ թշնամոյն ի վերայ հասանիլ ցաւմամբ։ Այնուհետև մտրակեալ դերիվարն անցաներ ինքն ի ներքս, քան զեղեգն ուր պահէին շարակարգութիւնք շղթայիր թնդանոցացն. և զի մի յայտնեսցին դարանակալքն փութով ի գործ դնէր զհրացան մեքենայսն։

Բա՜ էլ սարսափելի դիպուածոյս՝ և անհնարին աղէտք կոտորածոցն՝ որ առաջի կայ իմ պատմել, սոսկումն, ի սմին և սարսափումն պաշարեն զառն սիրտ։ Զի թէպէտ և զսակաւ հաւատակիցսն ողբալ ոչ դադարիմ, որք վասն հայրենեացն ողջակիզեալ, սակայն և վասն յոգնակին օտարացելոցն հաւատով զիջանիլ ի գութ ոչ տայ ինձ մոռանալ օրէնք բնութեանս, մանաւանդ տեսանելով զչարամահ դառն կոտոնաց նոցա յանմտութեան և զվախճան նոցին վրէժխնդրութեան, բայց սակայն զոր առաջի կայ իմ անյապաղ պատմեցից զի մի ամենայն ոք յանձն իւր յուսացեալ՝ կարծիցէ ի գլուխ հասուցանել զամբարշտութեան իւրոյ զվախճան, և յուսացեալքն ի տէր պարծեսցին, զի փրկութիւն տեառն վերակացու է նոցա։ Քանզի իբրև մերձ յեզեգունս հասեալ զօրքն պարսից զչորեք հարիւրովքն բագձացեալ բոլորէին[13], «մի՜ հարկանէք զդոսա». շահն աղաղակէր, մինչև Մադաթովն կենդանոյն ըմբռնիցէք, յորս կարծէր լինիլ։ Գոչէր անդուստ ապա առին Յովհաննէս և (այնինքն է զօրապետն) և չորեք հարիւրքն ի սէր հայրենեացն զոհեսցին։

Շարժեցաւ երկիր ի ներքոյ ոտից յեղակարծումն ի ձայնէ ահեղագոչ թնդմանն, և օդն խռովեցաւ ի սոսկալի արձակմանէ թնդանօթացն։ Անդ էր տեսանել շտապ մեծի տագնապին և զշուառանս անբաւ տարակուսանաց՝ ի կողն թշնամեաց։ Ա՜հ և բեկումն, մութ և խաւար առ հասարակ տարածանէր ի վերայ նոցա, առ ի սաստիկ թոթափմանէ, հրացան՝ մահառիթ երկաթոյն,

11 Բնագրում՝ տակնապաւ։

12 Բնագրում՝ սմպակակոխ։

13 Բնագրում՝ պոլորէին։

քանզի թնդանօթաձիգ շղթայքն ընդ որս և մասունք երկաթեղինաց՝ իբրև զեղեգն, զմարդիկ և զանասուն հնձեն կիսակտուր շերտեալ՝ յերկիր գլորելով[14]։ Եվ ո՞վ էր որ յոտս կալ կարացաւ առաջի այնպիսի փայլակնացայտ շողացեալ և աղխախեալ երկաթոյն։ Վասն զի քաջք և վատասիրտք առ հասարակ լքանէին։ Քանզի այր և ձի, մարդ և անասուն, կիսամեռք և թաւագլոր դիակունք զմիմեամբք շփոթեալք՝ զմիմեանս բաբախէին. դիակոյտ բազմութիւնն և վիրաւորք ոչ սակաւք՝ խոշ անկեալ ի ներքոյ ոտից, մօտ առ մօտ խտացեալ զկենդանիս գլորմամբ յերկիր կործանէին։ Եւ այսպէս առ ի յոյժ թանձրանալ դիականցն կենդանիքն փախչիլ ոչ կարէին։ Իսկ յետուստ ոմանք ճողոպրեալք զծանրութիւն զինուց յանձանց թոթափեալ՝ այր անդր տարաբերեալ դեռև էին, քանզի աչք իւրեանց մթագնեալ էին և սեացեալ ի լոյս տրւընչեան ի մեծ տագնապէն[15]. և ձայնք գալարափողոյն ռուսաց իբրև զմահու գուժկան՝ յականջս նոցա մեծաբարբառ հնչէին, յորմէ ամենայն ոք զփախնուլն կեանք և քաջութիւն մեծ վարկանէր։ Իսկ ապա իբրև առ սակաւ մի հրացանութիւնն դադարէր ի փարատիլ ծխոյ վառօդին և ի ցնդիլ յօդս՝ տեսարան սրտաշարժ տեսանիւր անդէն ի դաշտին Շամքուրայ։ Վա՞սն զի ի սմա անգո ևս քան զբազմութիւն ազգաժողով կոտորածոյն Յովսափաթու արեան հեղեղք ցերկիր ճապաղէին։ Տապաստ անկեալ դիքն անկենդան իբրև զքարակոյտս դերբկաց զհող երկրին ծածկեալ երևէին։ Իսկ եթէ փախուցեալոցն հնար ինչ լինէր՝ թեև ի հողմոց անցանց սեպհականէին յերեսացն թագչիլ պատերազմին։ Բայց դու ե՛կ և զսոցայն տես աղետալի թշվառութիւն։ Քանզի հեծելազօր հրոսակք ռուսաց՝ ընդ որս էին ոչ սակաւք և ի հայոց ազգէն, գրեթէ իբրև զարծուիս ընդ օդս սլացեալ այնպէս ի դասուց հետևակացն իւրեանց դատուցեալք զկնի այլազգացն խոյանային՝ ի յաջողակ ընթացս քաջարշաւ երիվարաց, ուր և հասանէին զհետ սոցա ի ճանապարհայն, տիկախոց սատակմամբ տապաստ յերկիր արկանէին։ Եւ բազումք՝ այն էին, որք ի սրոյ ջերծեալք՝ ի մացառս սատակէին, քանզի յետուստ գետնաքարշ[16] հանդերձիցն իւրեանց քղանց կռուեալք ի փուշս և ի թուփս ի թշնամեացն կարծէին ըմբռնեալք և յահէն յերեսս ի վայր յերկիր անկանէին մեռեալ։ Եւ այսպէս տէր մատնեաց զնոսա ի ձեռս հաւատացելոց իւրոց, որք կոտորելով զհալածական թշնամիսն մինչև ի մեծ գետն Շամքուր դիմէին, ուր սոսկալի կոտորած ևս ի ջրոյ անտի եղեալ տեսանէին, զի մարդիկք հարիւրաւոր յերես անկեալ դնէին զեղերբ գետոյն, ուռուցեալք իբր և զտիկ ջրալիր[17] փքացեալք և կէսք պայթուցեալք։ Քանզի ի ծարաւ տոթոյ և ի թշնամոյն իւրեանց հալածելոյ ստիպեալ, այնպէս լինէր և մահ նոցա արբում ի ջրոյ գետոյն և ոչ իսկ պիտոյանային բազմախողխող սրոյն ռուսաց։

Յետ այսորիկ և քաջն Յովհաննէս այսպէս զթշնամիսն պարտեալ և յաղթանակեալ՝ ապա առնոյր զգիր ի վրաց մայրաքաղաքէն Տփխսոյ՝ ուր փոխարքայն նստէր ռուսաց, թէ ահա ոչ յապաղ հասանիցէ քեզ գունդն դրակոնեան՝ աւելի քան զերկոտասան հազարս արանց քաջաց և նահատակաց, որք յետ ոչ բազում ժամուց պատրաստական ի նմին տեղոջ առ նա գտան ժամանեալ։ Եւ զերկոսին գունդն ի մի խմբեաց, ապա կառաւար կալեալ զմիտս իւր առ յոյսն բնաւից Քրիստոս խնդբէր յօգնականութիւն անձին զամենայաղթ զբարձր բազուկն Փրկչին մերոյ հաւատով։ Հետազօտեալ կրթէր այնուհետև զկնի գիշատեալ թշնամեաց այլազգեաց և մինչ ընդ գետն անցանէր ընդ Շամքոր, ահա արք հայազգիք բերին ընդ առաջ նմա զսուտ մարգարէն զմոլլան, որ վասն ստասացութեանն երկուցեալ յերկուց կողմանցն պատերազմողաց ղողեալ թագուցեալ էր ի քարատակ մի փոքր մի ի ճանապարհէն մեկուսի։

---

14 Բնագրում՝ կլորելով։

15 Բնագրում՝ տակնապէն։

16 Բնագրում՝ կետնաքարշ։

17 Բնագրում՝ լրալիր։

Արանցն պարգևս տուեալ առնոյր ի նոցանէ զմոլլայն և իսկ և իսկ հրամայէր տիկ ձևացուցանել և ի վերայ տկաձև մոլլային արձանագրել զբանս, քաջարշաւ առիւծու՝ նմանեալ Մադաթով. թշնամի Մահմեդի և Ալոյն՝ հաւատով, և առաքէր ընծայ շահին իւրոյ։ Իսկ շահն որպէս ասացաք, իբրև տեսանէր այնպէս զվնասակար ելս պատերազմին՝ զանշուք զմի լոտիկ արկեալ զերեաւ գաղտ ի զօրացն ի փախուստ շրջէր զընթացս իւր։ Եւ քանի մի արամբք հեծելովք զերծեալ հասանէր ի հայրենիս Մադաթովի ի գեօղն Աւետարանոց. և քանզի ընդ կենդանիս ոչ կարաց կռուել ընդ մնռեալս յառնէր անշուշտ ի պատերազմ։ Իբրև շուն մի, որ ի մարտն երկուցեալ յարձակիլ՝ սաստիկ զայրացմամբ զքարինս կրծկրծէ և զկոշտս ոտամբք փխրէ. այսպէս և սա իբրու թէ վնաս մեծ հասուցանելով զոսկերս հօր նորայ և ազգականաց ի գերեզմանացն հանեալ հրով տայր այրել ի սաստիկ վիրաւորելոյ սրտին։ Եւ անտի չուեալ գնայ տրտմեալ և տարակուսեալ՝ յարքունիս իւր ի Թէհրան և զփախուցեալսն ի զօրուց գան հարկանէր ասելով. «ընդ է՞ր ոչ քաջութեամբ մարտեայք»։ Ասէ ցնա մի ոմն ի նոցանէ, «յարև քո մեռանիցիմ արքայ, քաջութիւնդ ասացիք ռուսք են նոքա, գիտէ տէր՝ բոցացա[յ]տ հուր են նոքա և ոչ ռուսք»։ Եւ զօրապետն ռուսաց մինչև հասեալ ի սահմանս հայրենի գաւառին իւրոյ Ղարապաղու զբօթն առնոյր զչարութեան, թէ ամենայն գոյք նորա հանդերձ գեղեցկաշէն դաստակերտիւն և մինչև ոսկերք մեռելոց հրոյ մատնեցան յանմիտ շահէն, որ անօգուտ անձին քան մանաւանդ վնասակար գործեաց զայն, զգլուխն տարուբերեալ շարժէր աւաղելով, և ի բոցակնակոյն նորին աչաց կայծակունք բարկութեան ցոլանային։ Քանզի յիշէր նա այնու զամենայն անաստուած եղեռնութիւնս չարակիրթ բարուցն պարսից, որք գործեցին ընդ ողորմելի ազգիս հայոց անխնայ։ Եվ յեղակարծումն արդէն յարդարեալ կազմեալ զօրօքն իբրև զօդապարիկ իմն չուէր գնայր յայն կոյս գետոյն Երասխայ, և անտի սկսեալ զորս մի անգամն գտանէր, ճարակ սրոյ զնոսին մատնել անխնայ։ Եւ զբոցածաւալ հրկիզութիւն նորա տեսեալ ընդ տեղիս ընդ որ անցանէր՝ անձնատուր լիներ նմա իւրովի բազմահարուստ և անուանի քաղաքն Դաւրէժ. և անտի հարթանայր առաջի բազմախողխող սրոյ նորա ճանապարհն Թէհրանու և ընթանայր ընդ հոլով ամուր քաղաքս և աւանս պարսից իբրև ընդ անմարդաբնակ վայրս անապատից։ Իսկ ի Զանկան քաղաքն հասեալ՝ ընդառաջ լինէր նմա դ[ե]սպանն անգղիացոց բաղում թախանձանօք բանս հաշտութեանս խօսելով, և տուրս հարկ մեծամեծս ի դիմաց Շահին խոստանայր տէրութեանն ռուսաց՝ որքան և կամիսցին, միայն թէ՝ յետս դարձին սիրով ելցէ յերկրէն իւրմէ։ Ուր նախքան զամենայն ինչ անդէն կռեալ հաստատէր պայմանս, թէ որքան և ուր ուրէք գոն հայք ի տէրութեան պարսից ի սկզբանէ անտի պանդխտեալ և գերեալք՝ անխափան կամս ունին չուել և ի հայրենի իւրեանց անդրէն վերադառնալ։ Եւ այսպէս զթագաւորն Պարսից ընդ հարկաւ ռուսաց արարեալ, քաջն Մադաթով դառնայր ի Հայաստան բաղում յաղթութեամբ։ Թողեալ նշան յաղթութեան իւրոյ յերկրին Պարսից ուր զդաշտն հաստատեցին՝ ծոռափոր մի ճեղքեալ և լի ածուխով, և է մինչև ցայսօր։